ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԻՈՏՆԱՅԻՆ ԼՈՒՍԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ ՏԵՂԱԴՐՈՒՄՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N *ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/15*

ք. Արտաշատ

« 05 » մարտ 2026թ.

*«Արտաշատի համայնքապետարան»*, ի դեմս համայնքի ղեկավար Կ. Մկրտչյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ալութաորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***Արտաշատ համայնքում երթևեկության և հետիոտնային լուսացույցների ձեռքբերում տեղադրումով*** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:[1]

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.[2]

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

---

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:[3]

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:[4]

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում ***է 37 680 960 (երեսունյոթ միլիոն վեց հարյուր ութսուն հազար ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամ***, ներառյալ ԱԱՀ-ն:[5]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

---

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի *25-ը:*

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[6]

## ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[7] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:[8]

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

---

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից:

Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը[9]

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից ------ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[10]

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Արտաշատի համայնքապետարան | «Աութսորս» ՍՊԸ |
| Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, | Հասցե՝ ք. Երևան, Սարմենի փ. 1, 2/1 |
| ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62 | տարածք |
| Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| ՀՎՀՀ՝ 04240737 | Հ/Հ՝ 163007079839 |
| Հ/Հ՝ 900412151533 | ՀՎՀՀ՝ 02639627 |
| Համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան | Համայնքի ղեկավար՝ Ա. Սարգսյան |
| ---------------------------------------- | ---------------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

________________________________

*Հավելված N 1*
*« 05 » մարտ 2026թ. կնքված*
*ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/15 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 45311142/501 | | դրամ | 37 680 960 | 1 | Արտաշատ համայնք, | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած , իսկ կատարման ավարտ 60 օրացուցային օր: |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Արտաշատի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ,
ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 04240737
Հ/Հ՝ 900412151533
Համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Աութսորս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Սարմենի փ. 1, 2/1 տարածք
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 163007079839
ՀՎՀՀ՝ 02639627
Համայնքի ղեկավար՝ Ա. Սարգսյան

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված N 1.1*
*« 05 » մարտ 2026թ. կնքված*
*ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/15 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

***/Արտաշատ համայնքում երթևեկության և հետիոտնային լուսացույցների ձեռքբերում տեղադրումով ծառայությունների մատուցում/***

Լուսավորության բնութագրերը համապատասխանում են ԳՕՍ 33385-2015-ի պահանջներին :
Կլիմայական ցուցանիշներ՝ տեղադրման կատեգորիա 1՝ համաձայն ԳՕՍ 33385-2015-ի :
Էլեկտրական ցնցումների պաշտպանության II դաս,
LED մոդուլի/պատյանի արտաքին գործոններից պաշտպանության աստիճանը՝ IP54/23՝ համաձայն ԳՕՍ 14254-ի
Աշխատանքային ջերմաստիճանի միջակայք՝ –60°C — +45°C
Հարաբերական խոնավությունը 25ºC-ում ՝ 100%
Սնուցման լարում՝ 220V/12V/24V
Սնուցման հաճախականությունը՝ 50 Հց ± 1%
Մեկ բաժնի էներգիայի սպառումը ոչ ավելի, քան՝ 7 Վտ
Լույսի աղբյուրի միջին ծառայության ժամկետը՝ 10 տարի:
Ընդհանուր չափերը՝ ոչ ավելի, քան (Բ × Լ × Խ), մմ 610 × 298 × 190,
Թվով 2 բացվածքների տրամագիծը չափը, մմ 200/200
Քաշը ՝3.96 կգ:



Տեխնիկական բնութագրի շեղումները կարող են կազմել +-1%

**Հետնիոտնային լուսացույցի կառավարման կոճակ**

Պաշտպանության աստիճան IP68
Աշխատանքային ժամկետ - Նվազագունը 50 միլիոն անգամ միացում և անջատում
Տեխնիկական բնութագրի շեղումները կարող են կազմել +-1%



| | |
|---|---|
| Լարում, Վ | 187, 242 |
| Աշխատանքային ջերմաստիճանը, °C | -40°C-ից մինչև +50°C |
| Պաշտպանության աստիճան | համաձայն ԳՕՍ 14254-96 – IP54 |
| Ելքային հզորության շղթաների առավելագույն | 16 |

| | |
|---|---|
| կը | |
| ացված TVP ալիքների առավելագույն քանակը | 2 |
| րմնա յան և միջանկյալ միջոցառումների տևողության փոփոխության դիսկրետությունը, s | 1 |
| լեկտրական ցնցումներից պաշտպանության դաս | համաձայն ԳՕՍՏ 12.2.007.0-ի |
| Չափսեր ( Բ x Լ x Խ ), մմ | 395x300x220 |
| Կլիմայական կատարողականություն | Ս, տեղադրման կատեգորիա I` համաձայն ԳՕՍՏ 15150-ի |
| Առավելագույն էներգիայի սպառում, Վտ | ոչ ավելի, քան 30 |
| Առավելագույն ալիքի ելքային հոսանք, Ա | ոչ ավելի, քան 2 |
| Բոլոր ալիքների միջև ցանկացած պահի միացված առավելագույն ելքային հոսանքը, A | ոչ ավելի, քան 20 |
| Մեկուսացման դիմադրություն, մՕմ | առնվազն 20 |
| Հարաբերական խոնավություն | մինչև 95% +30°C ջերմաստիճանում` առանց խտացման |
| Թրթռման բեռի ամպլիտուդ | 5 Հց-ից մինչև 25 Հց հաճախականության տիրույթում, մմ, ոչ ավելի, քան 0.1 |
| Կարգավորիչի անկայուն հիշողության մեջ պահվող ծրագրերի քանակը, հատ: | 13 |
| Օրական պլանների քանակը | 24 |
| Շաբաթական պլանների քանակը | 7 |
| Ծրագրերի քանակը | 16 |
| Մեկ ծրագրի ցիկլերի քանակը | 320 |
| Ուղղությունների քանակը | 63 |
| Օդակաձև նախշով գրանցամատյանի կրառումների քանակը | 200 |
| Թարթումների քանակը մեկ րոպեում | 55-ից մինչև 65 |
| Լուսացույցի ազդանշանային լամպերի միացված լիճակի տևողությունը մեկ թարթման ընթացքում, վայրկյան | 0.5 |
| Ցանկացած հարվածի տևողության միջակայքը, վայրկյան | 1-ից մինչև 256 |
| Ժամանակային միջակայքի հաշվարկման սխալ % | ոչ ավելի, քան 1 |

Տեխնիկական բնութագրի շեղումները կարող են կազմել +-1%



**Տրանսպորտային լուսացույց**

Նախատեսված է տրանսպորտային միջոցների և լուսաազդանշանային հարմարանք, որը կիրառվում է տրանսպորտային միջոցների և հետիոտների անցման հերթականությունը կարգավորելու համար.:
Արտադրված ԳՕՍՏ 33385-2015-ի 1-ին կատեգորյայի կլիմակայան դասում:
Կորպուսը հարվածակայուն պոլիկարբոնատային պլաստիկից , ցինկապատ մետաղական ամրակներով, հարթ, գույնը սև:
Լուսավորության տեխնիկական բնութագրերը համապատասխանում են ԳՕՍՏ 33385-2015 պահանջներին:
Էլեկտրական ցնցումներից պաշտպանության դաս - 2
LED մոդուլի/պատյանի արտաքին գործոններից պաշտպանության աստիճանը - IP54/23 по ГОСТ 14254
Աշխատանքային ջերմաստիճանի միջակայք - –60°C — +45ºC
Հարաբերական խոնավությունը 25ºC-ում - 100%
սնուցման լարումը - 220В/12В/24В
սնուցման լարման հաճախականությունը- 50Гц ± 1%
Մեկ բաժնի էներգիայի սպառումը ոչ ավելի, քան` 9 Վատ
Ընդհանուր չափերը ոչ ավելի, քան (Բ × Լ × Խ), մմ - 1150×398×70
Բացվածքների չափերը մմ - 300/300/300
բաժիններ քանակը 3 հատ

Քաշը 7.5 կգ:



Տեխնիկական բնութագրի շեղումները կարող են կազմել +-1%

**Լուսացույց T.7.2-ի պարամետրերը**

Լուսացույց T.7.2 300 մմ տրամագծով արտադրվում է УHL կլիմայական տարբերակով, տեղադրման կատեգորիա 1՝ համաձայն ԳՕՍՏ 15150-ի: Պատյանի պաշտպանության աստիճանը շրջակա միջավայրի ազդեցությունից IP54՝ համաձայն ԳՕՍՏ 14254-ի: ԱԶԴԱՆՇԻ ԵԼՔԱՅԻՆ ԱՊԵՐՏՈՒՐԱՅԻ ՏՐԱՄԱԳԻԾԸ՝ 300 ՄՄ: ՄՆՈՒՆԴԻ ԼԱՐՈՒՄ՝ 175 Վ-ից մինչև 245 Վ, ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝ 50 ՀՑ + - 1%: Էլեկտրական հարվածից պաշտպանության դաս II: Լուսավորության բնութագրերը համապատասխանում են ԳՕՍՏ Ռ 52282-ի պահանջներին: ԱՊՐԱՆՔԻ ՔԱՇԸ՝ ՈՉ ԱՎԵԼԻ, ՔԱՆ 3.5 ԿԳ: Ընդհանուր չափսեր, մմ՝ 380x375x300: Առավելագույն հզորության սպառումը՝ ոչ ավելի, քան 9 Վտ: Պաշտպանություն բարձր հզորության միկրովայրկյանային իմպուլսային միջամտությունից: ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ՝ ՈՉ ՊԱԿԱՍ, ՔԱՆ 500 ՄՕՄ: Աշխատանքային ջերմաստիճանի միջակայքը՝ -50-ից մինչև +60: Մեխանիկական կատարման խումբ M1՝ համաձայն ԳՕՍՏ-ի: 17516.1-90 Տեխնիկական բնութագրի շեղումները կարող են կազմել +-1%



**Մալուխի մոնտաժում**

Մալուխ ВВГ 4X4 պղնձյա

**Խողովակի տեղադրում**

Խողովակ 108*4մմ L =7 մ, փոսորակի փորում 3-րդ կարգի գրունտներում 0,16մ3, հիմքերի բետոնացում 0,16 մ3 Բ12,5 դասի բետոնով , խողովակի ներկում

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Արտաշատի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ,
ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 04240737
Հ/Հ՝ 900412151533
Համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Աութսորս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Սարմենի փ. 1, 2/1 տարածք
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 163007079839
ՀՎՀՀ՝ 02639627
Համայնքի ղեկավար՝ Ա. Սարգսյան

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված 1.2*
*« 05 » մարտ 2026թ. կնքված*
*ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/15 ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

*/Արտաշատ համայնքում երթևեկության և հետիոտնային լուսացույցների ձեռքբերում տեղադրումով ծառայությունների մատուցում/*

| Հ/Հ | ԱՆՎԱՆՈՒՄ | ՉԱՓԻ ՄԻԱՎՈՐ | ՔԱՆԱԿ | ԳԻՆ | ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ |
|---|---|---|---|---|---|
| **1** | **Խողովակի տեղադրում** | **հատ** | **57** | **12 000** | **684 000** |
| 2 | Տրանսպորտային լուսացույցի տեղադրում | հատ | 62 | 150 000 | 9 300 000 |
| 3 | Հետնոտային լուսացույցի տեղադրում | հատ | 62 | 120 000 | 7 440 000 |
| 4 | Տրանսպորտային լուսցույցի ղեկավարման վահանակի տեղադրում | հատ | 8 | 450 000 | 3 600 000 |
| | **Լուսացույցների նախատեսված հետիոտնի համար** | | | | |
| 5 | Տրանսպորտային լուսացույցի տեղադրում | հատ | 12 | 150 000 | 1 800 000 |
| 6 | Հետնոտային լուսացույցի տեղադրում | հատ | 12 | 60 000 | 720 000. |
| 7 | հետնիոտային լուսացույցի կառավարման կոճակ | հատ | 12 | 60 000 | 720 000 |
| 8 | Հետնյոտային լուսացույցի ղեկավարման վահանակի տեղադրում | հատ | 6 | 160 000 | 960 000 |
| 9 | լուսցույց դեղին թարթող | հատ | 20 | 130 000 | 2 600 000 |
| 10 | Մալուխի մոնտաժում | մետր | 3920,000 | 790 | 3 096 800 |
| | **ԱՐԺԵՔ** | | | | **31 400 800** |
| | **ԱԱՀ** | | | | **6 280 160.0** |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | 37 680 960 | |

*Ծառայության մատուցման երաշխիքային ժամկետ է սահմանվում՝ ծառայությունը ամբողջական ավարտելուն հաջորդող օրվանից հաշված 5 տարի:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Արտաշատի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ,
ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 04240737
Հ/Հ՝ 900412151533
Համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան

---------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Աութսորս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Սարմենի փ. 1, 2/1 տարածք
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 163007079839
ՀՎՀՀ՝ 02639627
Համայնքի ղեկավար՝ Ա. Սարգսյան

---------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված N 2*
*«05» մարտ 2026թ. կնքված*
*ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/15 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 202 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45311142/501 | Արտաշատ համայնքում երթևեկության և հետիոտնային լուսացույցների ձեռքբերում տեղադրումով | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Արտաշատի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ,
ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 04240737
Հ/Հ՝ 900412151533
Համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան

---------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Աութսորս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Սարմենի փ. 1, 2/1 տարածք
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 163007079839
ՀՎՀՀ՝ 02639627
Համայնքի ղեկավար՝ Ա. Սարգսյան

---------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.